ծողներ և այս իսկ պատճառով նրանց կազմած դատաստանագրքերում տեղ է գտել բավականաչափ նուրբ հարցերի խորաթափանց վերլուծություն՝ ժամանակի սովորույթների արժարժմամբ և ժամանակակից գիտության մակարդակով։

Բժշկության պատմության բոլոր ուսումնասիրողները (Հովհաննիսյան Լ. Ա., Հարությունյան Գ. Գ., Կծոյան Ա. Ս.) միահամուռ կերպով պնդում են, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել բավական ինքնատիպ բժշկություն, որն իր զարգացմամբ չի զիջել իր ժամանակի այլ երկրների բժշկության մակարդակին։

Հայտնի է, որ ոչ մի օրենսդրական ակտում մինչև XVI դարը, բժշկի՝ որպես փորձագետի, պրոցեսուալ վիճակի մասին չկա ոչ մի հիշատակում, թեև կասկածից վեր է, որ բոլոր երկրներում էլ, ինչպես և Հայաստանում, բժիշկները այս կամ այն դատական գործով հրավիրվել են իբրև փորձագետներ։

Ժամանակի շատ տարբեր մասնագիտության տեր մարդիկ զբաղվել են բժշկությամբ, և եթե այդ անձավորությունները (վարդապետները, գիտնականները), համարվել են փորձառու անձինք, ապա բնականաբար նրանք պետք է համարվեն դատական բժշկության մարի կրողներ։ Բնական է և ակնհայտ, որ Անանիա Ճիրակացին, Հովհան Մանդակունին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Մխիթար Գոշը, Սմբատ Իշխանը, Գրիգոր Տաթևացին և մյուսները լինելով ժամանակի մեծագույն մտածողներ և զարգացած անձնավորություններ, ներկայացրել են և բնագիտության այնպիսի մի ճյուղ, ինչպիսին բժշկությունն է ու նրա մասնաճյուղը՝ դատական բժշկությունը։

Բժշկի հասկացողության այսպիսի վիճակը բնորոշ էր բոլոր երկրների համար։ Եթե մյուս երկրների օրենսդրական ակտերից և ոչ մեկում չունենք ուղղակի ցուցում գիտակ մարդկանց դատարան կանչելու մասին, ապա հայկական օրենսդրքերը պահանջել են դ։

Դատական բժշկությունը Հա աստանում այդ շրջանում, անշուշտ, չէր գտնվում ապրմնային վիճակում, քանի որ առանձին դեպքերում տեսնում ենք այդ գիտության վերաբերյալ փայլուն մարեր ու արտահայտություններ, սակայն նրանց մասսայական բնույթ կրելու կամ դատական բժշկության՝ որպես ամբողջ մի գիտության մասին չունենք բացարձակապես և ոչ մի փաստ։

Դատական բժշկությունը նույն վիճակում է գտնվել և մյուս երկրներում։ Այստեղ կարելի է խոսել միայն որոշ առանձնահատկությունների կամ երևույթների ավելի վաղ հանդես գալու մասին։

Ե. ՄԱԿԱՐՅԱՆ

## ՀԻՆ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒ

*Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարան Մինիստրների սովետին առընթեր հայ-լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի միջոցով սփյուռքից նվեր ստացավ Կ. Պոլսի արքեպիսկոպոս Գևորգ Առսլանյանի հին դրամների հավաքածուն։ Վերջինիս մեջ հիմնական խմբերով կան հետևյալ դրամները.*

| №№ | Դրամներ | Քանակն ըստ մետաղի | |
|---|---|---|---|
| | | արծաթե | պղնձե |
| 1 | Աքեմենյան | 2 | — |
| 2 | Հունական | 44 | 13 |
| 3 | Հռոմեական | 62 | 149 |
| 4 | Պարթևական | 3 | — |
| 5 | Հայկական | 6 | 10 |
| 6 | Մյուսանդրական | 1 | 71 |
| 7 | Ասանյան | 2 | |
| 8 | Արաբական խալիֆաթի | 5 | 4 |
| 9 | Սելջուկյան | 35 | 59 |
| 10 | Մոնղոլական | 24 | |
| 11 | Իրանական շահերի | 24 | 16 |
| 12 | Օսմանյան սուլթանների | 65 | 15 |
| 13 | Օվրոպական և գաղութային | 29 | 31 |
| 14 | Անորոշ ու մաշված | 42 | 51 |

Հավաքածուի ամենահին դրամը վերաբերում է մ. թ. ա. VI—IV դդ.։ Դա աքեմենյան արծաթյա դրամ է 5,30 գ. քաշով, որի մի կողմում պատկերված է ռազմիկ՝ ծնկաչոք նետ արձակելիս, մյուս կողմում՝ երախը բաց առյուծի գլուխ։ Նմանօրինակ դրամները խիստ հազվագյուտ են։ Աքեմենյանները VI—IV դդ. թողարկում էին հիշյալ արծաթե դրամի նման դրամներ, որոնք կոչվում էին «սիկլ»։ Հայաստանում, որքան մեզ հայտնի է, մի անգամ գտնվել է աքեմենյան սիկլ։ Արտաքինապես դրանք արխաիկ ձևի դրամներ են, երբ դեռ դրամահատության գործում կիրառում էին „quadratum incusum" կաղապարները։



Աքեմենյան, Միլետի, Ա. Մակեդոնացու, սելևկյան ու կապադովկիական արծաթ դրամներ

Գ. Առսլանյանի հին դրամների շարքում ուշագրավ են Բաբելոնի աքեմենյան սատրապ Մազայոսի (331—328), ինչպես նաև Հունաստանի նախամակեդոնական շրջանի դրախմաները (արծաթ դրամ 4,30 գր. քաշով) և թեթրադրախմաները (=չորեքդրամյան)։

Հավաքածուում կան Ալեքսանդր Մակեդոնացու (336—327) 19 դրախմաներ։ Հայաստանում Մակեդոնացու արծաթյա դրամները հազվադեպ չեն. արձանագրված են մի շարք գյուտեր, ոչ միայն պատահական, այլև կապված հնագիտական պեղումների հետ (Գառնի, Դվին)։ Մակեդոնացու դրախմաներն ու թեթրադրախմաները թողարկվում էին երկար ժամանակ նույնիսկ նրա իշխանությունից հետո։ Մերձավոր արևելքի հելլենական միապետները պատրաստել էին տալիս արտաքինապես Մակեդոնացու դրամների նման դրամներ, որպեսզի բարձր պահեն իրենց դրամի վարկը միջազգային շուկայում։ Մակեդոնացու արծաթյա դրամների վրա մի կողմում

պատկերված էր դիցական հերոս Հերակլեսի բարձրաքանդակ գլուխը, իսկ մյուս կողմում՝ հելլենոսական Հունաստանի գերագույն աստված Զևսը՝ դահին բազմած։ Հելլենիզմի դարաշրջանում դրամի այդ տիպը հայտնի էր և լայն տարածում ուներ միջազգային ապրանքա-դրամական շրջանառության ոլորտում։

Անտիկ դրամների խմբում կան Կապադովկիայի Արիարաթ IV (220—163), Արիարաթ V (163—130), Արիարաթ VI (125—111), Արիարաթ IX (99—87) և Արիոբարզան I (95—62) թագավորների դրախմաները, որոնց վրա հստակորեն պահպանված են հիշյալ միապետների բարձրաքանդակ պրոֆիլները։ Կապադովկիայի դրամներն ընդհանրապես քիչ են պատահում։ Նրանք շրջանառության համեմատաբար նեղ ոլորտ են ունեցել և հանդես են եկել մեծ մասամբ սելևկյան, պարթևական ու հայկական (Արտաշեսյան) դրամների հետ միասին։ Աղքատիկ են ժողովածուի պտղոմեական, պարթևական, ինչպես նաև Պերգամի թագավորության դրամների բաժինները։ Պտղոմեական հարստությունը ներկայացված է միայն մի դրամով՝ Պտղոմեոս XIII-ի (80—50, 55—51) թեթրադրախմայով, իսկ պարթևականը՝ Արտաբան I-ի (128—123), Հրահատ IV-ի (37—2) և Վարդան I-ի (41—45) դրախմաներով (արծաթ 4,00—3,60 գր.)։

Հավաքածուի ամենաստվար հատվածը կազմում են Հռոմեական կայսրության արծաթե ու պղնձե դրամները։ Առանձին բացառություններով ներկայացված են նմուշներ բոլոր կայսրների դրամներից։ Քանակապես գերակշռում են III—IV դդ. դրամները, թեև կան վաղ շրջանի, մասնավորապես Անտոնիոսի, Օկտավիանոսի, Տիբերիոսի, Վեսպասիանոսի, Դոմիտիանոսի, Տրայանոսի, Հադրիանոսի, Պիոսի և այլոց մինչև II դ. վերջի դենարները։ Հռոմեական կայսրության արծաթե դրամների հիմնական միավորը դենարն էր, որի բաշը հասնում է մոտ 4,50 գրամի։ Սակայն հավաքածուն գրեթե բոլորովին զուրկ է Հռոմի հանրապետության շրջանի դրամներից, որոնք համեմատաբար քիչ են, քան կայսրության դրամական միավորները։ Դրան հակառակ նշանակալից չափով հավաքված են Բյուզանդական կայսրության դրամներից։ Վերջիններիս թվում կարելի է տեսնել պղնձե դրամներ, թողարկված կայսրներ Անաստասիոսի (491—518), Հուստինիանոս I-ի (582—602), Հերակլեսի և Հերակլ-Կոնստանտինի (610—641) կողմից և մանավանդ XI—XII դարերի անոնիմ ֆոլիսներ (պղնձե դրամներ)։

Տարաբախտաբար հավաքածուն աղքատ է իր ունեցած հայկական, սասանյան ու արաբական դրամներով։ Վաղ հայկական դրամներից պահպանվել է միայն մեկ թեթրադրախմա Տիգրան II-ի պատկերով։ Մնացած հայկական դրամները Կիլիկիայի Ռուբինյան թագավորներ Լևոն I-ի (1198—1219), Հեթում I-ի (1226—1270), հայերեն ու արաբատառ խորագրերով, ինչպես նաև Սմբատի (1296—1298), Լևոն II-ի (1270—1289) ու XIII դ. մի քանի մաշված արծաթե ու պղնձե դրամներ են։

Սասանյան շրջանից ներկայացված են Խոսրով I (531—579) Անուշիրվանի և Խոսրով II Փարվեզի (590—628) դրախմաները (արծաթ միավորը 3,75—4,00 գր.)։ Դատելով նրանց վրա պահպանված պահլավերեն խորագրերից, կարելի է նշել, որ այդ դրախմաները պատրաստվել են Սասանյան Իրանի հարավային նահանգներում, մասնավորապես Ֆարսում և Քերմանում։

Արաբական խալիֆաթի դրամներից կան միայն Աբբասյան ալ-Մահդի խալիֆի անունով, հիջրայի 161 (=մ. թ. 777—778) և 164 (=մ. թ. 780—781) թթ., ալ-Մուհամմեդիյա (=Ռեյ), Մեդինատ աս-Սալամ (=Բաղդադ) և ալ-Աբբասիյա քաղաքների դիրհեմները (=արծաթի միավոր 3,75—3,90 գր.), ինչպես նաև VIII—IX դդ. մաշված աբբասյան ֆելսեր (պղնձե դրամներ)։

Առաջավոր ու Միջին Ասիայում այս շատ տարածված սասանյան ու աբբասյան դրամների կողքին, բարեբախտաբար, հավաքածուում պահպանվել է մի հազվագյուտ կիսադրախմա՝ թողարկված Տաբարստանի կուսակալ Օմարի իշխանության օրոք, պահլավերեն խորագրով, Տաբարստանի 128 տարեթվով (=մ. թ. 778)։ Հայտնի է, որ VII դարի առաջին կեսից Իրանի հյուսիսային շրջանները և Կասպից ծովի հարավային նահանգները, այդ թվում Տաբարստանը, նվաճվեցին արաբական զորքերի կողմից։ Սակայն Տաբարստանի տեղական ֆեոդալները մինչև VIII դարի վերջը կարողացան պահպանել իրենց ներքին անկախությունը։ Ի տարբերություն խալիֆաթում օրենքով ընդունված ու լայնորեն գործածվող իսլամական թուֆի խորագրերով դրամների, Տաբարստանում շարունակում էին թողարկել վերջին Սասանյանների դրախմաներին նման պահլավերեն գրերով դրամներ։ Դրանք պահպանվել ու մեզ են հասել որոշ քանակությամբ, որոնցից մեկն էլ ահա անցել է Գ. Առսլանյանի հավաքածուի մեջ։

Հետաքրքրական է նաև մի այլ դրամ՝ հիջրայի 404 (=մ. թ. 1013—1014) թ., Ֆարսի Բուվեյհիդյան հարստության սուլթան ադ-Դաուլա Աբուշոջայի անունով գիրհեմը (=արծաթ դրամ 4,38 գրամ բաշով)։ Վերջինիս մեջ արծաթը խիստ փոքր չափով ձուլված է պղնձի հետ։

Այս հանդամանքը պատահականություն չպետք է համարել։ Հայտնի է, որ X դարի վերջերից Արևելքի դրամական տնտեսության մեջ նկատվում է արծաթի պակասություն, որը խորանալով, XI—XII դարերում վերածվում է ճգնաժամի։ Արծաթի բացակայության պատճառով փոխանակողները դադարում են որակյալ դիրհեմներ թողարկելուց։ Ա.դ տեսակետից ժողովածուի հիշ ալ հիջրայի 404 (...մ. թ. 1013—1014) թ. դիրհեմը Իրանում դրվագված ան վերջին արծաթե դրամներից է, որոնցից հետո շրջանառության մեջ շուրջ 200 տարի իշխում էին պղնձե դրամները։ Արծաթի պակասությունն այդ դիրհեմի մեջ ինքնաստինքյան արտացոլում է Բուվեյհիդների իշխանության սահմաններում, տվյալ դեպքում Ֆարսում, արծաթի ճգնաժամի սկիզբը։



Արծաթ դրամներ. հայկական՝ Տիգրան Մեծ, պարթևական՝ Միհրդատ II, Վարդան I, հռոմեական՝ Վեսպասիանոս, Տրայանոս, Հադրիանոս, Ա. Պիոս։

Արևելյան դրամների ամենախոշոր բաժինը կազմում են XII—XIII դդ. սելջուկյան պղնձե դիրհեմները։ Վերջիններիս մեջ կան Մարդինի Օրտուկյաններ՝ Նեջմ-ադ-դին Ալպի (1152—1176), Կուդբ-ադ-դին Իլ-Ղազի (1176—1184), Հուսամ-ադ-դին Օրտուկ Առսլանի (1200—1239), ինչպես նաև հիսն Քեյֆի ու Ամիդի Օրտուկյաններ՝ Ֆաիր-ադ-դին Կարա-Առսլանի (1148—1174), Նասիր-ադ-դին Մահմուդի (1200—1222) և Մոսուլի աթաբեկ Կուդբ-ադ-դին Մավդուդի (1149—1170) ու Իրբիլի Մուզաֆֆար ադ-դին Կուկբուրի Իբն Ալի Աթաբեկի (1190—1233) պղնձե դրամները։ Սրանց հետ միասին կարելի է տեսնել Փոքր Ասիայի սելջուկյան սուլ-

Թաններ՝ Քայ-Կոբադ I (1219—1236), Քայ-Խուսրաու II (1236—1245), Քայ-Քաուս II (1245—1257), Կլիչ-Առսլան IV (1257—1267), Քայ-Խուսրաու III (1267—1283), Մասուդ II (1283—1296) և այլոց արծաթե ու պղնձե դրամներով։ Դրանք թողարկվել են Սվազում, Կոնիայում, Էրզրումում, Սրզնկայում, Անթարիայում և ուրիշ քաղաքներում։ Ինչպես դրամագիտական բոլոր հուշոր ժողովածուները, այս հավաքածուն ևս որոշակի ցույց է տալիս, որ XII դարի սելջուկյան դրամների շարքում չկան արծաթե դրամներ։ Այդ իրողությունն ստեղծվել էր դրամական տնտեսության մեջ արծաթի բացակայության պատճառով։ Հավաքածուն ցույց է տալիս, որ սելջուկյան բոլոր արծաթե դրամները վերաբերում են հիմնականում XIII դարին, երբ երկար ընդմիջումից հետո կրկին շրջանառության մեջ են մտնում լավորակ արծաթե դիրհեմները, ըստ որում, միավորի այն քաշով, որն ընդունված էր VIII—X դարերում։









Տարարստանի, Խալիֆաթի (Արրասյան), Կիլիկիայի Հայկական (Լևոն I-ի օծման), սելջուկյան, հուլաղուլյան, թեմուրյան ու Վենետիկի դրսության, VIII—XVII դդ. արծաթ դրամներ։

Մոնղոլական խմբի դրամներից հավաքածուի մեջ կան Չինգիզյան Մենգու խանի անունով, հիջրայի 607 (=մ. թ. 1210—1211) թ. մի դիրհեմ և Հուլաղուլյան Ղազան Մահմուդ (1295—1304), Արու-Սաիդ (1316—1315), Սուլեյման (1339—1344) և Անուշիրվան (1344—1355) խանների լավ պահպանված դրամներով։ Վերջիններս դուրս են եկել Թավրիզ, Անի, Սրզընկա քաղաքներից։

Արևելյան դրամների վերջին բաժնում մենք տեսնում ենք իրանական շահերի և օսմանյան սուլթանների արծաթե ու պղնձե տարբեր դրամական միավորները։ Ըստ արձանագրությունների, իրանական դրամանիշերը բաժանվում են երեք ենթախմբի. սեֆյան, զենդյան և կաջարյան դրամների։

Սեֆյան արծաթե ու պղնձե դրամներից հավաքված են Աբբաս II (1642—1667), Սուլեյման I (1667—1694), Թահմասպ II (1772—1731) շահերի և այլ մաշված դրամանիշեր։ Զենդյաններից ներկայացված են միայն Քերիմ խանի (1750—1779) արծաթե գրամները, իսկ Կաջարյաններից՝ Ֆաթ-Ալի շահի (1779—1787), ինչպես նաև Նասր-ադ-դին (1848—1896) ու Մուզաֆար-ադ-դին շահերի անուններով տարբեր արժեքների դրամներ։ Ըստ փողերանոցների դրանք դրվագված են Երևան, Խովեյզ, Աստարաբադ, Ղազվին, Թեհրան, Քաշան, Քանդահիր քաղաքներում։

Օսմանյան դրամներից հավաքված են՝ Բայազետ II (1481—1512), Ահմեդ I (1603—1617), Սուլեյման II (1687—1697), Ահմեդ III (1703—1730), Մահմուդ I (1730—1754), Մուստաֆա III (1757—1773), Աբդ-ալ-Համիդ I (1773—1789), Սելիմ III (1789—1807), Մահմուդ II (1808—1839), Աբդ-ալ-Մեջիդ (1839—1861) և Աբդ-ուլ-Համիդ II (1876—1909) սուլթանների արծաթե և պղնձե դրամները՝ թողարկված Փոքր Ասիայում, Իրաքում, Եգիպտոսում և Թունիսում։ Դրանց մեջ կան ակչեներ, փարաներ, խորբուրներ, օնլիկներ, բեշլիկներ, իգիրմիլիկներ և զուռուշներ։

Դ. Առսլանյանի հավաքածուն չի սպառվում անտիկ աշխարհի ու միջնադարյան Արևելքի դրամներով։ Նրանում կան նաև արևմտաեվրոպական, մասնավորապես իսպանական, ֆրանսիական, բելգիական, շվեդական, գերմանական, լեհական, ռուսական, ավստրո-հունգարական, բրիտանական և XVI—XX դդ. ալ արծաթե ու պղնձե դրամների նմուշներ։

Որոշելով հավաքածուի յուրաքանչյուր դրամը, մենք կարող ենք ասել, որ Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարանի պահպանությանը հանձնված են տարբեր էպոխաների ու երկրների արծաթե (354) և պղնձե (419) դրամներ, որոնք ներկայացնում են դրամական տարբեր սիստեմների տարբեր միավորներ։ Դրանցից իր ծագման ժամանակով ամենահին օրինակը վերաբերում է մ. թ. ա. VI—IV դարերին, իսկ ամենանորը՝ ժամանակակից է մեր օրերին (XX դ. 50-ական թթ.)։ Աշխարհագրական առումով հավաքածուն ընդգրկում է Միջերկրական ծովի արևմտյան շրջաններից մինչև Կասպից ծովի հարավային մասերը և Կենտրոնական Եվրոպայի հյուսիսային ու արևելյան երկրամասերից մինչև Իրանի հարավային նահանգները։ Առավել մեծ չափով դրանք հին Հռոմի ու Հունաստանի, ինչպես նաև Առաջավոր Ասիայի հնամյա քաղաքներից դուրս եկած դրամներ են։

Երախտագիտությամբ պետք է նշել, որ Դ. Առսլանյանի դրամագիտական հավաքածուն, որն ստեղծվել է հնասերի երկար տարիների անխոնջ ջանքերով, արժեքավոր նվեր է Հայաստանի պատմության թանգարանին։

Խ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

## ПЕРЕВОДЫ ВААНА ТЕРЬЯНА ДЛЯ «ПОЭЗИИ АРМЕНИИ»

Выступая за тесную и органическую связь с русской литературой, Терьян считал необходимым сделать достоянием армянских читателей сокровища мировой литературы, сознавая, что «наибольшим залогом развития» армянской литературы будет развитие переводческой литературы. Но, стремясь познакомить армянских читателей с мировой, русской литературой, Терьян одновременно придавал большое значение переводам армянской литературы на русский язык.

До сих пор, при освещении переводческой деятельности Терьяна, недостаточно подробно говорилось о той большой работе, которую проделал поэт для сборника «Поэзия Армении», редактировавшегося В. Я. Брюсовым. Это было обусловлено тем, что долгое время архив Брюсова оставался недоступен для исследователей. Ныне, когда материалы этого архива переданы библиотеке имени В. И. Ленина (Москва), там обнаружены многочисленные и интересные документы, проливающие свет на связи Брюсова с армянской культурой.